ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 06-Ա

*07 փետրվարի2020թ.*

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Ավագանին որոշում է

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.2020թ համայնքի բյուջեի կատարողականի հաղորդման մասին :

Զեկ.- Ս. Աբրահամյան

2.Ոսկետափ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 13-ի թիվ 44-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

3.Համայնքային սեփականություն հանդիսացող 03-076-0144-0088 ծածկագրի տակ գտնվող 0.0335 հա գյուղատնտեսական այլ հողատեսքը օրենքով սահմանված կարգով օտարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 07-Ա

---

07փետրվարի 2020թ.

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի 2020թ. բյուջեի եկամուտների կատարողականը 07.02.2020թ. դրությամբ հետևյալ կերպ՝

| | Պլան | Փաստացի | Կատարողական % |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 19500.0 | 222.0 | 1.1 |
| Գույքահարկ | 15600.0 | 1985.0 | 11.9 |
| Հողի վարձավճար | 3450.0 | 20.0 | 0.57 |
| Տեղական տուրք | 1141.5 | 789.0 | 72.7 |
| Տեղական վճար, աղբահ. | 6400.0 | 194.0 | 3 |
| Ծնողական վճար | 4000.0 | 0 | 0 |
| Մուտքավճար | 160.0 | 5.0 | 3.1 |

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Կարապետյան Արմեն կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 08-Ա**

---

07փետրվարի 2020թ.

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13_Ի ԹԻՎ 44-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րր հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նվազագույն աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, <<Կուտակային կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին,

Ավագանին որոշում է

1Ոսկետափ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13/Ոսկետափի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝հավելավճարները սահմանելու, հաստատելու մասին / թիվ 44-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝համաձայն հավելվածների.

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի մեկից ծագած իրավահարաբերությունների վրա:

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Կարապետյան Արմեն կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

Արարատի մարզի Ոսկետափ համայնքի ավագանու

20 20 թ. Փետրվարի 7 -ի թիվ 08-Ա որոշման

ԿԱՐԳ

Ոսկետափի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը

1.Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար ,ովքեր <<Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ամսվա մեկից :

2.Ոսկետափ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 1%-ի չափով:

3.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին ընդհանուր գումարով:

Աշխատակազմի քարտուղար Կ. Ավդալյան

Հավելված 2

*Ոսկետափ համայնքի ավագանու*

*07փետրվարի 2020թ 08-Ա որոշման*

2020Թ ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքապետարանի աշխատակիցների քանակը՝ 19

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 340 000 |
| *1.ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 226000 |
| *2.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| Աշխատակազմի քարտուղար/1.2.1/ | 1 | 226000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3.1/ | 1 | 212000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1.1/<br>Ծանկ /3.1.2/ | 2 | 135000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2.1/ | 1 | 130 000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3.1/ | 1 | 125 000 |

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Հարկահավաք | 1 | 125000 |
| Ավագ օպերատոր | 1 | 125000 |
| Օպերատոր | 1 | 125000 |
| Գործավար | 1 | 95000 |

| | | |
|---|---|---|
| Անասնաբույժ | 1 | 95000 |
| Մշակույթի տան վարիչ | 1 | 100000 |
| Գրադարանի վարիչ | 1 | 100000 |
| Գրադարանավարուհի | 1 | 95000 |

4. ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | |
|---|---|---|
| Պարետ | 1 | 125000 |
| Պահակ | 1 | 95000 |
| Հավաքարար | 1 | 100000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 09-Ա**

---

07 փետրվարի 2020թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-076-0144-0088

ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՝ 0.0335 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով ,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04.08.2005 թվականի թիվ 1408-Ն որոշումը և հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով

Ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 03-076-0144-0088 ծածկագիրը կրող ՝ 0.0335 հա գյուղատնտեսական հողամասը օրենքով սահմանված կարգով օտարելու թույլտվություն տալու համար:

2. Հողամասի օտարման համար մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով

Տոնոյան Յուրա կողմ

Հովակիմյան Վարթեր կողմ

Բարսեղյան Գեղամ կողմ

Հովհաննիսյան Նաիրի կողմ

Հայրապետյան Արկադյա կողմ

Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ